

СОПОСТАВИТЕЛЬНАЯ ТИПОЛОГИЯ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ КОМПОНЕНТОВ СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ «ВОЗРАСТ» В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Мариам Артуровна Адамян

mariam@leadavenue.com

*К.ф.н., преподаватель,
Государственный университет имени В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье рассматриваются словообразовательные особенности компонентов семантического поля «возраст» в английском и армянском языках. Цель статьи – выявить различия и сходства, присутствующие в выражении концепта возраста в двух языках. Анализ основан на различных способах словообразования, включая транспозицию, собирательные существительные и сложные слова, которые способствуют формированию значений, связанных с возрастом. Сравнительный подход позволяет более глубоко понять, как концепт возраста выражается в двух разных языках и культурах.

Ключевые слова: семантическое поле, возраст, транспозиция, собирательное существительное, парные слова.

Հստ Մ. Արեղյանի՝ մեր բոլոր պատկերացումներն արտաքին աշխարհի առարկաների, երևույթների և մեր իսկ հոգեկան վիճակների մասին իրար հետ զուգորդվելով կազմում են երկու մեծ խմբեր, առանց

որոնց չենք կարող մտածել: Այդ պատկերացումների մի մասը ներկայանում է իբրև անկախ գոյություն ունեցող առարկաներ, մյուս մասը՝ իբրև հատկանիշներ: Անկախ գոյություն ունեցող առարկաները, ըստ հեղինակի՝ գոյականներն են, իսկ ածականները, բայերն ու մակբայները՝ հատկանիշ գույց տվող միավորները [4: 25–26]:

Անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտում գոյականը ամենահաճախ հանդիպող խոսքի մասն է: Անգլերենում առանձնացրել ենք 52 գոյական, որոնցից 27-ը պատկանում է միայն գոյական խոսքի մասին, իսկ 25-ն ամրագրված է նաև որպես այլ խոսքի մաս: Իսկ հայերենում գոյականների ընդհանուր թիվը 92-ն է, որոնցից 69-ը կարող է գործածվել նաև որպես այլ խոսքի մաս: Հետաքրքիր է ուսումնասիրել հայերենի այն 23 միավորը, որոնք պատկանում են միայն գոյական խոսքի մասին: Այդ բառերն են՝ **հայր, մայր, աղջիկ, որդի, զավակ, պապ, տատ, մանկիկ, պարման, օրիորդ, վառեկ, ուլ, լակոտ, խոճկոր, կորյուն, հորթ, ձագ, ճուտ/իկ, երինջ, ամլիկ, հասակ, ահել-ջահել, ջահել-ջուհուլ**: Այս բառացանկը կարելի է բաժանել երեք խմբի՝

- 1) ազգակցական կապ արտահայտող բառեր,
- 2) կենդանիների ձագերի անվանումներ,
- 3) հավաքական հասկացություններ:

Անգլերենում գոյականը չունի կայուն ելակետային ձև: Նոր գոյականներ կարելի է կերտել ածականի և գոյականի արդեն գոյություն ունեցող հիմքերին գոյականակերտ ածանցներ ավելացնելով [3: 44–46]: Օրինակ՝ *-hood* (*child – childhood*), *-er* (*teenage – teenager*), *-ism* (*age – ageism*), *-ity* (*junior – juniority*), *-ling* (*young – youngling*), *-ness* (*mature – matureness*) և այլն:

Նույնը կարելի է ասել հայերենի գոյականների մասին. դրանք կարող են սերել տարբեր խոսքի մասերից և կազմվել մի շարք ածանցների միջոցով, օրինակ՝ *-իկ* (*մանուկ – մանկիկ*), *-ուկ* (*մանչ – մանչուկ*),

-ակ (որդի – որդյակ), -ուհի (ծեր – ծերուհի): Նշենք, որ հայերենի ուսումնասիրվող նյութում գոյականակերտ ածանցներից առավել կիրառելի է *-ություն* վերջածանցը, որը, ավելանալով ածականի և գոյականի հիմքերին, կերտում է վերացական իմաստ արտահայտող գոյականներ: Օրինակ՝ *երիտասարդ – երիտասարդություն, պատանյակ – պատանեկություն, մանուկ – մանկություն* և այլն:

Հայերենի նյութում առկա է նաև հարադիր բարդությունների կրկնավոր տեսակին պատկանող երկու գոյական՝ *սահել-ջահել, ջահել-ջուհուլ*, որոնք բառարանում ներկայացված են որպես հավաքական գոյականներ:

Անգլերենի բայի ելակետային ձևը ինֆինիտիվն է՝ անորոշ դերբայը, որի ցուցիչը *to* մասնիկն է: Այստեղ բայը չունի կայուն քերականական վերջավորություն, օրինակ՝ *to gray, to age, to toddle, to grow* և այլն: Սակայն այս խոսքի մասի դեպքում ևս գոյություն ունեն բայական կերտ ածանցներ, որոնք, ավելանալով տարբեր խոսքիմասային հիմքերին, կերտում են բայեր [3: 85–87], ինչպես օրինակ՝ *re- (juvenile – rejuvenate), -ate (mature – maturate), -en (ripe – ripen), -ize (woman – womanize), -ify (lady – ladyfy)* և այլն: Այնուամենայնիվ, անգլերենում փոխակարգման առկայությունը դժվարեցնում է բայերի ընդհանուր թվի հստակ հաշվարկումը:

Հայերենում բայերը, ի տարբերություն գոյականների՝ տարբերվում են իրենց ելակետային անորոշ դերբայական ձևով՝ վերջանալով *-ել, -ալ* մասնիկներով: Հետևաբար, հայերենում բայը որպես բառ միշտ ածանցավոր է: Սակայն ըստ կազմության՝ այն, ինչպես հայտնի է, լինում է *պարզ (զառամել, պառավել, ալևորել), ածանցավոր (հասնել, մեծանալ, ջահելանալ), հարադրավոր (տարիքն առնել, հասակ առնել)* և *զուգադրավոր* (գնալ-գալ): Ուշագրավ է, որ հայերենի «տարիք» իմաստային դաշտում բայի զուգադրավոր տեսակը բացակայում է:

Կարելի է փաստել, որ հայերենում բայ կազմելն ընդհանուր առմամբ բավականին դյուրին է. *-ել, -ալ* վերջավորությունները միայնակ կամ բայական որևէ ածանցով կցվելով այլ խոսքի մասերի հիմքերին՝ կերտում են բայեր: Բնականաբար, այս երևույթը ցայտուն արտահայտվում է նաև ուսումնասիրվող իմաստային դաշտում՝ *մեծ – մեծանալ, հասուն – հասունանալ, մանուկ – մանկանալ, երիտասարդ – երիտասարդանալ* և այլն: Այստեղ թերևս, պետք է նշել, որ կան միավորներ, որոնցից բայեր կերտել հնարավոր չէ, դրանցից են՝ *նորածին (նորածնանալ?), մատաղ (մատաղանալ?), հասակակից (հասակակցել?)* և այլն: Հետևաբար, հայերենում ևս բավականին բարդ է ներկայացնել բայերի կոնկրետ թիվ:

Ածականն ու մակբայն իրենց նշանակությամբ կազմում են մի ընդհանուր տեսակ, քանի որ ցույց են տալիս հատկանիշ: Անգլերենում մակբայներն ըստ կազմության լինում են *պարզ (well, now, here), ածանցավոր (slowly, likewise, northward), բարդ (everywhere, sometimes) և բաղադրյալ (by no means)* [1]: Ուսումնասիրվող անգլերեն լեզվանյութում հայտնաբերվել է երեք պարզ և ինն ածանցավոր մակբայ, իսկ բարդ և նկարագրական տիպի մակբայներն առհասարակ բացակայում են:

Ինչպես արդեն նշեցինք՝ մակբայների առումով անգլերենի լեզվանյութն այնքան էլ հարուստ չէ. ուսումնասիրության ընթացքում դուրս ենք բերել 12 մակբայ՝ *perennially, grayly, maturely, boyishly, girlishly, manly, womanly, childishly, majorly, big, small, little*, ընդ որում՝ *major* ածականից կազմված *majorly* մակբայը դուրս է մնում ուսումնասիրությունից, քանի որ դրա բառարանային բացատրությունը չի հարում տարիքին՝ *very or extremely*: Հետաքրքիր է առանձնացնել նաև *big, small, little* միավորները, որոնք չունենալով մակբայակերտ ածանց, բառարաններում առանձնացվում են որպես մակբայներ՝ ի լրումն այս

բառերի խոսքիմասային այլ պատկանելության. միավորները բառարանում ներկայացված են միաժամանակ որպես ածական, մակբայ և գոյական:

Հայերենում բուն մակբայները ևս սակավաթիվ են, դրանց օգտագործումը կախված է նեղ համատեքստից՝ համակցվող բառից, օրինակ՝ «սաստիկ քամի», «սաստիկ կարմրություն» կապակցությունների մեջ «սաստիկ» բառն ածական է, իսկ «սաստիկ կարմիր», «սաստիկ կարմրեց» կապակցությունների մեջ՝ մակբայ: Այսինքն՝ ըստ Մ. Աբեղյանի՝ հայերենում մակբայն ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ [4: 106]: Այնուամենայնիվ, հայերենի ուսումնասիրվող իմաստային դաշտում հայտնաբերվել է երեք միավոր, որոնք բառարանում տրվում են որպես մակբայ: Դրանք են՝ **նոր** (նորից, դարձյալ, կրկին: Մարտեցինք, նորից նրանք՝ մարտի մեջ նոր ձախողվեցին: (Շ. Ռուսթավելի)), **տարեկան** (մի տարվա ընթացքում: Տարեկան 3 անգամ գործուղման է գնում:) բառերը, որոնց մակբայական նշանակությունները չեն մատնանշում տարիք, և **ջահել-ջահել** մակբայը (բոլորովին ջահել, ջահել հասակում), որը համարվում է հարադիր բարդությունների կրկնավոր տեսակ և դիտարկվում է որպես մեկ բառային միավոր:

Բացի բառարաններում ընդգրկված բուն մակբայներից, հայերենում մակբայ կարելի է կազմել նաև այլ խոսքի մասերին մակբայակերտ ածանցներ ավելացնելով, որոնցից են՝ *-բար*, *-պես*, *-որեն*, *-ովին*, *-ակի*, *-գին*, *-պատիկ*, *-վարի*, *-ուստ*, *-իվ* ածանցները [7: 328–329]: Օրինակ՝ *մեծ* – *մեծավարի*, *երիտասարդ* – *երիտասարդաբար*, *որդի* – *որդիաբար*, *երեխա* – *երեխայաբար*, *չափահաս* – *չափահասորեն* և այլն:

Հայտնի է, որ ածականը կազմության տեսակետից միատարր չէ. այն ներկայացնում է բազմազան ձևերի մի համակարգ, ինչը պայմա-

նավորված է լեզվում քերականական կառուցվածքի յուրահատկությամբ: Ածականները կազմությամբ լինում են *պարզ* կամ *արմատական* (*ավագ, մեծ, փոքր, grey, old, ripe*) և *բաղադրյալ*, այն է՝ *ածանցավոր* (*բազմատի, ծերունկ, տարիքոտ, perennial, durable, coeval*), *բարդ* (*նորածին, տարեկից, ալեհեր, newborn, teenage*) և *բարդածանցավոր* (*բազմամյա, մեծահասակ, տղայահասակ, long-lived, middle-aged*): Այսպես, պարզ կամ արմատական ածականները յուրաքանչյուր լեզվում սակավաթիվ են, ինչի պատճառը ըստ Ա. Քոսյանի՝ «տվյալ լեզվի նախնական բառային կազմի աղքատությունն է» [8: 154]: Պարզ ածականների պակասը լրացնում են բաղադրյալ ածականները, որոնք կազմվում են խոսքի տարբեր մասերից՝ ածանցման, փոխակարգման և բառաբարդման ճանապարհով:

Անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտը լի է ածականներով: Անգլերենում ընդհանուր 69 միավորից երեսունինը բառաբանում ներկայացվում է որպես ածական, իսկ հայերենի 119 բառից ածական խոսքի մասին է պատկանում իննսունհինգը:

Անգլերեն լեզվանյութում աչքի է ընկնում մեկ բաղադրյալ ածական՝ *over-the-hill*, որը նշանակում է *ծեր*: Իսկ հայերենի տարիք ցույց տվող ածականների շարքից դուրս է բերվել *ջահել-ջիվան* միավորը, որը պատկանում է հարադիր բարդությունների կրկնադիր տեսակին:

Հետաքրքրական է, որ բացի տարիք ցույց տվող 95 ածականներից, հայերենի բացատրական բառարաններում առկա է նաև «տարիք» իմակը պարունակող այնպիսի ածականների մի մեծ խումբ, որոնք կազմվում են թվականների միջոցով: Օրինակ՝ *միամսյա, երկամսյա, քառամսյա, միամյա, եռամյա, տասնամյա, հարյուրամյա* և այլն: Նմանատիպ բոլոր ածականները բարդածանցավոր բառեր են, քանի որ կազմված են որևէ թվականից, *-ամ/-* կամ *-ամիս-* արմատից և *-յա* վերջածանցից:

Ուշագրավ է, որ *-ամիս-* արմատը պարունակող ածականների իմաստային վերաբերությունը սահմանափակ է. բառերը վերաբերում են միայն առարկաների (*քառամսյա ժամանակաշրջան, երկամսյա պայմանագիր* և այլն): Ի տարբերություն *-ամիս-* արմատով ածականների՝ *-ամ-* արմատով ածականների իմաստային վերաբերությունը բավականին լայն է. դրանք կարող են միաժամանակ վերաբերել ինչպես մարդկանց, այնպես էլ բույսերի, առարկաների և կենդանիների (*միամյա երեխա, հարյուրամյա կաղնի, երկամյա դպրոց, հնգամյա եղնիկ*):

Հայերենի՝ թվականներով կազմված տարիք ցույց տվող ածականները անգլերենում ունեն իրենց համարժեքները, որոնք, սակայն, ամրագրված չեն բառարաններում, քանի որ դրանք բառակապակցություններ են և կազմվում են որևէ թվականի, *year* գոյականի և *old* ածականի միջոցով՝ *two-year-old, fifteen-year-old* և այլն:

Անգլերեն բառարաններից լեզվանյութի դուրսբերման արդյունքում հանդիպեցինք «տարիք» իմաստ արտահայտող այնպիսի միավորներ, որոնք ծագել են լատիներենում, այնուհետև անցել են անգլերենին և ցույց են տալիս տարիքը տասնամյակներով: Ընդ որում՝ այս միավորները բառարաններում ներկայացված են միաժամանակ և՛ որպես ածական, և՛ որպես գոյական: Այդ միավորներն են՝

1. *Denarian* (*տասից տասնինը տարեկան*),
2. *Vicenarian* (*քսանից քսանինը տարեկան*),
3. *Tricenarian* (*երեսունից երեսունինը տարեկան*),
4. *Quadragenarian* (*քառասունից քառասունինը տարեկան*),
5. *Quinquagenarian* (*հիսունից հիսունինը տարեկան*),
6. *Sexagenarian* (*վաթսունից վաթսունինը տարեկան*),
7. *Septuagenarian* (*յոթանասունից յոթանասունինը տարեկան*),

- 8. Octogenarian** (ութսունից ութսունինը տարեկան),
9. Nonagenarian (իննսունից իննսունինը տարեկան),
10. Centenarian (հարյուրից հարյուր ինը տարեկան),
11. Supercentenarian (հարյուր տասը և բարձր տարիքի):

Նմանատիպ միավորները հայերենին բնորոշ չեն:

Այսպիսով, անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի միավորների բառակազմական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում էլ առկա են բառաստեղծման բազմազան միջոցներ՝ ածանցում, բառափոխություն և փոխակարգում: Սակայն, եթե անգլերենում գերակշռում է փոխակարգումը, ինչը հնարավորություն է տալիս նույն միավորը կիրառել տարբեր խոսքի մասերում, ապա հայերենում բառաստեղծական գործընթացները հիմնականում հիմնվում են ածանցման վրա: Ուսումնասիրության արդյունքներն ընդգծում են, որ «տարիք» իմաստային դաշտը երկու լեզուներում ոչ միայն հարուստ է տարբեր խոսքի մասերով, այլև լեզվական մի շարք յուրահատկություններով, որոնք պայմանավորված են լեզվամշակութային առանձնահատկություններով:

ЛИТЕРАТУРА

1. English Adverbs [Electronic resource]. – Mode of access: <http://lovely-language.com/grammar/grammar-rules/english-adverbs/> (Date of access: Feb 20, 2025).
2. Hornby A. Oxford Advanced Learner's Dictionary of Current English. – Oxford, Oxford University Press, 2005. – 1780 pp.
3. Мешков О.Д. Словообразование современного английского языка / О.Д. Мешков; АН СССР, Кафедра иностр. яз. – М.: Наука, 1976. – 245 с.
4. Աբեղյան Մ.Խ. Երկեր, Հ. Զ. / Խմբ. կողմ.՝ Աղայան Է.Բ., Հակոբյան Պ.Հ., Հարությունյան Ս.Բ., Ղանալանյան Ա.Տ., Մելիք-Օհանջանյան Կ.Ա., Նալբանդյան Վ.Ս., Պիվազյան Է.Ա., Սարգսյան Խ.Ա.: ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ին-տ: – Երևան՝ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974: – 848 էջ:

5. Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, 2 հատ.: – Երևան՝ «Հայաստան» հրատ., 1976: – 1618 էջ:
6. Աղայան Է.Բ. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն): – Երևան՝ ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1967: – 404 էջ:
7. Սուքիասյան Ա. Մ. Ժամանակակից հայոց լեզու: – Երևան՝ Երևանի համալսարանի հրատ., 1983: – 440 էջ:
8. Քոսյան Վ. Ա. Արդի հայերենի ածականի կազմության շուրջը / Պատմաբանասիրական հանդես, Հ. I: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 1959: – ԷԷ. 154–162:

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ «ՏԱՐԻՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մ.Ա. Աղամյան

mariam@leadavenue.com

*Բ.գ.թ., դասախոս,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են «տարիք» իմաստական դաշտի բաղադրիչների ձևաբանական առանձնահատկությունները անգլերենում և հայերենում: Հոդվածի նպատակը՝ բացահայտել երկու լեզուներում տարիքի հասկացության արտահայտման մեջ առկա տարբերություններն ու նմանությունները: Համեմատական մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի հստակ հասկանալ, ինչպես է «տարիք» հասկացությունը արտահայտվում երկու տարբեր լեզուներում և մշակույթներում:

Բանալի բառեր՝ իմաստական դաշտ, տարիք, տրանսպոզիցիա, հավաքական գոյական, զույգ բառեր:

THE WORD-FORMATION PECULIARITIES OF THE COMPONENTS OF THE SEMANTIC FIELD OF «AGE» IN ENGLISH AND ARMENIAN

M. Adamyan

mariam@leadavenue.com

*PhD, Lecturer,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

This article examines the word-formation features of the semantic field of «age» in English and Armenian. The aim of the article is to highlight the differences and similarities that exist in the expression of the concept of age in both languages. The analysis is based on various word-formation techniques, including transposition, collective nouns, and compound structures, which contribute to the formation of age-related meanings. This comparative approach allows for a deeper understanding of how age is linguistically represented across two distinct languages and cultures.

Keywords: semantic field, age, transposition, collective noun, reduplicative compounds.

Информация о статье:

*статья поступила в редакцию 22 февраля 2025 г.,
подписана к печати в номер 15 (19) / 2025 – 25.05.2025 г.*